ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ – 150

Հովհաննես Թումանյանի հոբելյանական միջոցառումների շարքը Վրաստանում նախատեսվում է սկսել 2019 թ. փետրվարի 19-ին, Թումանյանի ծննդյան օրը:

1. Փետրվարի 19-ին, Թումանյանական տարվա միջոցառումները Թբիլիսիում կմեկնարկեն հետևյալ օրակարգով.

ա. 16:30 - Այցելություն Հայ գրողների և հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն, որտեղ կկատարվի ծաղիկների խոնարհում և հոգեհանգստյան արարողություն:

բ. Կկատարվի գիրք նվիրելու ավանդական միջոցառում:

գ. 18:00 - Ազգային գրադարանում (Խորհրդարանի) գեղարվեստական երեկո

- Թենգիզ Միկոյանցի՝ «Թումանյանի հետքերով» խորագրով անհատական ցուցահանդես (կազմակերպիչ՝ «Լոռվա ձոր» ՀՄ, Վիրահայոց թեմ)
- Բանախոսություն՝ նվիրված Թումանյանի կյանքին և գործունեությանը (բանախոս կհրավիրվի Երևանից, բանախոսությունը կթարգմանվի վրացերեն, կապահովվի տեքստի երկլեզվյա ընթերցում):
- Գրական, երաժշտական ծրագիր

2. Երևանի Հովհաննես Թումանյանի թանգարանի նախաձեռնությամբ և Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» կենտրոնի աջակցությամբ տպագրության է պատրաստվել Թումանյանի հեքիաթների երկլեզվյա ժողովածուն: Վրացերեն են թարգմանվել Հովհ. Թումանյանի 6 հեքիաթներ (թարգմանիչ՝ Գիվի Շահնազար), որոնք պատկերազարդվել են Թբիլիսիում, վրացի նկարիչների կողմից: Գիրքը կտպագրվի Երևանում: Գրքի շնորհանդես կկազմակերպվի Երևանում, Թբիլիսիում և տարածաշրջաններում:

3. Հոբելյանական միջոցառումների շրջանակում գիտական կոնֆերանս՝ նվիրված Հովհ. Թումանյանին և Կոմիտաս վարդապետին:

4. Աշխատանքներ են տարվելու Հովհ. Թումանյանի կիսանդրին Հավլաբար թաղամասում Պ.Ադամյամի անվան հայպետդրամ թատրոնին կից պուրակում տեղադրելու նպատակով:

5. Հովհ. Թումանյանի գրքերի տարբեր լեզուներով թարգմանությունների, Թումանյանին նվիրված արխիվային կարևոր նյութերի ցուցադրություն Հովհաննես Թումանյանի տանը:

6. Թբիլիսիի «Հովհ. Թումանյանի տուն» կենտրոնի միջոցով նախատեսվում է վրացերեն թարգմանել Թումանյանի քառյակները և առանձին գրքով հրատարակել: 3 Նախաձեռնությունն իրականացվելու է Վրաստանի գրողների միության հետ համագործակցությամբ և Երևանի Թումանյանի թանգարանի օժանդակությամբ: Գրքի շնորհանդես կկազմակերպվի նաև տարածաշրջաններում (Ախալցիխե, Ախալքալաք, Նինոծմինդա, Բաթումի):

7. Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան հայպետդրամ թատրոնի կողմից թումանյանական թեմայով կազմակերպել բեմադրություն: Ըստ նախնական ծրագրի՝ առաջին բեմադրությունը կլինի «Չախ-չախ թագավորը»: Կներկայացվի նաև «Գիքորը»:

8. Վրաստանի Կրթության, գիտության և մշակույթի նախարարության 2019 թվականի Ջավախքում իրականցվող «Բազմազանության» ծրագիրը նվիրվում է Հովհ. Թումանյանին և Կոմիտաս վարդապետին: Ծրագրին վրացի դպրոցականների, մշակույթի և արվեստի գործիչների հետ միասին մասնակցելու են Վիրահայոց թեմի կրթա-մշակութային և երիտասարդական կենտրոնները:

ԿՈՄԻՏԱՍ – 150

1. Կոմիտասի ստեղծագործությունների կատարումներով էկումենիկ համերգային ծրագիր Թբիլիսիի Սակրեբուլոյի սրահում, մայիսի 21-ին, ժամը 19:00-ին:

2. Կոմիտաս վարդապետի 150-ամյա հոբելյանի տոնակատարության շրջանակներում կանցկացվի համերգային ծրագիր Թբիլիսիի Վ. Սարաջիշվիլիի անվան կոնսերվատորիայի մեծ դահլիճում: Համերգը տեղի կունենա սեպտեմբերի 26-ին, ժամը 19:00-ին